ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

02.03.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ 87-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 90-Ն որոշման 5-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Գորիս համայնքի ֆոնդային բյուջեի 04 բաժնի 05 խմբի 01 դասի («Ճանապարհային տնտեսություն») 5113 («Շենքերի և շինությունների վերանորոգում») հոդվածը նվազեցնել 10000,0 հազար դրամով, վարչական բյուջեի 09 բաժնի 01 խմբի 01 դասի («Նախադպրոցական ուսուցում») 4511 («Սուբսիդիա») հոդվածը՝ 11136,0 հազար դրամով և վերաբաշխել 09 բաժնի 05 խմբի 01 դասի («Արտադպրոցական դաստիարակություն») 5129 («Այլ մեքենաներ և սարքավորումներ») հոդվածին 10000,0 հազար դրամ, վարչական բյուջեի 01 բաժնի 06 խմբի 01 դասի («Ընդհանուր բնույթի ծառայություններ, չպատկանող») 4657 («Այլ կապիտալ դրամաշնորհներ») հոդվածին՝ 11136,0 հազար դրամ:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2021/02/03
Ք. Գորիս